ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ
Խորհրդի 25.07.2025թ. թիվ 48 որոշմամբ
(Ուժի մեջ է 25.09.2025թ.-ից)

ՏՆԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Փաստաթղթի կոդ՝ Պ750-01-14
Խմբագրություն՝ 02
(Ակտիվի դաս՝ հրապարակային)

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Տնային կենդանիների ապահովագրության պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) մշակված են համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), այլ իրավական ակտերի (միասին այսուհետ՝ ՀՀ օրենսդրություն):

1.2. «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրված թիվ 0006 (0009) լիցենզիայի հիման վրա իրականացնում է «Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն», «Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն» և «Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն» դասերով ապահովագրություն՝ սույն Պայմանների հիման վրա կնքելով տնային կենդանիների ապահովագրության պայմանագիր կամ վկայագիր:

ԲԱԺԻՆ 2. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. **Ապահովագրող**՝ «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ.

2.2. **Ապահովադիր**՝ Ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կամ վկայագիր կնքած գործունակ ֆիզիկական անձ.

2.3. **Պայմանագիր**՝ սույն Պայմանների հիման վրա կնքված ապահովագրության պայմանագիր կամ վկայագիր.

2.4. **Շահառու**՝ ապահովագրական պատահար տեղի ունենալու պարագայում Պայմանագրով նախատեսված ապահովագրական հատուցում ստանալու իրավունք ունեցող անձ.

2.5. **Ապահովագրական գումար**՝ Ապահովագրողի կողմից վճարման ենթակա հնարավոր ապահովագրական հատուցման առավելագույն չափ.

2.6. **Ապահովագրական սակագին**՝ Ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափ՝ տոկոսային արտահայտությամբ.

2.7. **Ապահովագրավճար**՝ Պայմանագրով սահմանված չափով Ապահովադրի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումար.

2.8. **Ապահովագրական պատահար**՝ Պայմանագրով նախատեսված դեպք կամ իրադարձություն, որի տեղի ունենալը կրում է հավանական, անսպասելի և (կամ) պատահական բնույթ, որի տեղի ունենալու պարագայում Ապահովագրողը պարտավորվում է Շահառուին վճարել ապահովագրական հատուցում.

2.9. **Չհատուցվող գումար (ֆրանշիզա)**՝ Ապահովադրի մասնակցության չափը վնասի հատուցմանը (վնասի վերականգնմանը), որը սահմանվում է Պայմանագրով՝ կոնկրետ գումարի կամ Ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի տեսքով: Պայմանագրով կարող է սահմանվել պայմանական կամ ոչ պայմանական չհատուցվող գումար.

2.9.1. Պայմանագրում պայմանական չհատուցվող գումար սահմանված լինելու դեպքում Ապահովագրողն ազատվում է փաստացի վնասների կամ կորուստների հատուցման պարտականությունից, եթե այդ վնասի չափը չի գերազանցում Պայմանագրով սահմանված չհատուցվող գումարի չափը, և պարտավոր է վճարել ապահովագրական հատուցումն ամբողջությամբ, եթե դրա մեծությունը գերազանցում է չհատուցվող գումարի չափը.

2.9.2. Պայմանագրում ոչ պայմանական չհատուցվող գումար սահմանված լինելու դեպքում Ապահովագրողն ազատվում է Պայմանագրով սահմանված ոչ պայմանական չհատուցվող գումարի մասով հատուցում իրականացնելուց՝ անկախ վնասի և կորստի չափից:

2.10. **Տնային կենդանի**՝ շուն և կատու, որոնք ընտելացվել են մարդու կողմից և պահվում են տնային միջավայրում, այդ թվում՝ սեփական տան բակում՝ տրամադրելով նրանց ապաստան և սնունդ.

2.11. **Պահող**՝ Տնային կենդանու անասնաբուժական անձնագրում նշված կենդանուն պահող անձ.

2.12. **Վնասվածք**՝ ապահովագրական պատահարի հետևանքով ապահովագրված տնային կենդանու օրգանների և հյուսվածքների անատոմիական ամբողջականության կամ ֆիզիոլոգիական գործառույթների խախտումներ.

2.13. **Դժբախտ պատահար՝** Պայմանագրի գործողության ընթացքում Պահողի կամքից անկախ տեղի ունեցած հանկարծակի, պատահական, անսպասելի, կարճաժամկետ (մինչև մի քանի ժամ տևողությամբ), ոչ կենսաբանական, արտաքին ազդեցություն ունեցող իրադարձություն (դեպք), որի դեպքում Պահողի կամքից անկախ մարմնական վնասվածքների հետևանքով վնաս է հասցվում ապահովագրված տնային կենդանու առողջությանը.

2.14. **Էվթանազիա՝** կենդանուն անբուժելի, առավել ցավ պատճառող վիճակներից ազատելու, վարքագծային, ֆինանսական կամ այլ պատճառներով կյանքի դադարեցում.

2.15. **Նույնականացման չիպ կամ միկրոչիպ՝** կենդանուն նույնականացնելու համար նախատեսված էլեկտրոնային սարք, որն իրենից ներկայացնում է միկրոսխեմա՝ կազմված ընդունիչից, հաղորդչից և հատուկ կոդի պահպանման համար նախատեսված հիշողության բլոկից:

2.16. **Երրորդ անձանց պատկանող կենդանի՝** միայն շուն և կատու տեսակի կենդանիներ:

ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

3.1. Ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովադրի (Շահառուի)՝ ՀՀ օրենսդրությանը չհակասող գույքային շահերը, որոնք կապված են ապահովագրված տնային կենդանու (նրա առողջական վիճակի) վնասվածք ստանալու հետ:

3.2. Ապահովագրության օբյեկտ չեն հանդիսանում և ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԵՆ տնային կենդանիները, որոնք.

3.2.1. Պայմանագրի կնքման պահին 2 ամսականից փոքր կամ 8 տարեկանից մեծ են (բացառությամբ Պայմանագրի վերակնքման դեպքում),

3.2.2. վարակված են կենդանիների առանձնապես վտանգավոր հիվանդություններով (կատաղություն, ժանտախտ և այլն),

3.2.3. ներգրավված են որսորդության, ոստիկանական, անվտանգության պահպանման, ռազմական, մրցարշավային կամ այլ տիպի բարձր ռիսկայնություն ունեցող գործունեության մեջ, բացառությամբ ցուցահանդեսներին ներկայացնելը,

3.2.4. ներգրավված են գյուղատնտեսության մեջ, օգտագործվում են արդյունաբերական կամ ցանկացած տիպի շահույթ ստանալու նպատակով,

3.2.5. օգտագործվում են լաբորատոր հետազոտությունների, փորձերի, բուծման համար:

3.3. Սույն Պայմանների 2.10 կետում նշված կենդանիներից տարբերվող և (կամ) 3.2 կետում նշված խմբերից որևէ մեկում ընդգրկված կենդանիների համար կնքված Պայմանագրի գծով ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆ ԱԶԱՏՎՈՒՄ Է ՀԱՏՈՒՑՈՒՄ ՎՃԱՐԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ և ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԴԱԴԱՐԵՑՆԵԼ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ: Այս դեպքում Ապահովագրողը վերադարձնում է Պայմանագրի չլրացած օրերի գծով վճարված ապահովագրավճարը:

ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ ԵՎ ՌԻՍԿԵՐ

4.1 ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ և ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԵՆ հետևյալ ծախսերը.

4.1.1. Տնային կենդանու՝ դժբախտ պատահարի հետևանքով առաջացած անասնաբուժական ծախսերը, մասնավորապես՝

4.1.1.1. շտապ օգնության կազմակերպում. անհրաժեշտության դեպքում՝ Տնային կենդանու տեղափոխություն ապահովագրական պատահարի վայրից՝ անասնաբուժական կենտրոն և (կամ) անասնաբուժական կենտրոնից՝ կեցության վայր,

4.1.1.2. բժշկական միջամտություններ, ներառյալ՝ ստացիոնար և ամբուլատոր խնամք, փորահատություններ, լաբորատոր և գործիքային հետազոտություններ,

4.1.1.3. դեղորայքային բուժում, դեղամիջոցներ, բժշկական պարագաներ,

4.1.1.4. դժբախտ պատահարի հետևանքով տնային կենդանուն առավել ցավ պատճառող վիճակներից ազատելու նպատակով էվթանազիա:

4.2. ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐ Է ՀԱՄԱՐՎՈՒՄ ստորև նշված ռիսկերից որևէ մեկի կամ դրանց համակցման հետևանքով առաջացած պատահարը.

4.2.2. պայթյուն կամ հրդեհ,
4.2.3. տարերային աղետներ (կայծակ, կարկուտ, փոթորիկ, ջրհեղեղ, սողանք, հրաբխի ժայթքում), բացառությամբ երկրաշարժի,
4.2.4. հոսանքահարում,
4.2.5. տրանսպորտային միջոցի կողմից վրաերթ,
4.2.6. այլ կենդանիների կողմից հասցված վնաս,
4.2.7. կոտրանքով գողություն, ավազակություն,
4.2.8. երրորդ անձանց կանխամտածված գործողություններ,
4.2.9. օտար մարմինների կուլ տալը,
4.2.10. թունավորումը:

4.3. ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐ ՉԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ բոլոր հիվանդությունները կամ դրանց բարդացումները (նախկինում ախտորոշված կամ առաջին անգամ հայտնաբերված), ինչպես նաև այն հիվանդությունները կամ դրանց բարդացումները, որոնք առաջացել (զարգացել) են արտաքին գործոնների ազդեցության հետևանքով:

4.4. Պայմանագրով ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԵՆ ԲԱՑԱՌԱՊԵՍ ՀՀ տարածքում գործող և լիցենզավորված անասնաբուժական հաստատություններից ստացված ծառայությունների, ձեռքբերված դեղորայքի, բժշկական պարագաների համար կատարված ծախսերը:

ԲԱԺԻՆ 5. ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1. *ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ՉԵՆ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ և ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ ՉԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ պատահարները, որոնք առաջացել են հետևյալ դեպքերում.*

5.1.1. *առանց անվտանգության համապատասխան միջոցների (թոկ, դնչկալ և այլն) Տնային կենդանուն զբոսանքի տանելիս, բացառությամբ Տնային կենդանիների համար հատուկ առանձնացված տարածքներում զբոսնելուց,*
5.1.2. *Ապահովագրի (Շահառուի) կամ նրանց հանձնարարությամբ գործող անձանց կողմից կատարված միտումնավոր գործողությունները կամ անգործությունը,*
5.1.3. *միջուկային պայթյուն, ճառագայթում կամ ճառագայթումից վարակում, ռազմական գործողություններ, զորաշարժեր կամ դրանց հետևանքներ, ժողովրդական հուզումներ, հայտարարված կամ չհայտարարված պատերազմ, քաղաքացիական պատերազմ, գործադուլներ կամ ահաբեկչական գործողություններ,*
5.1.4. *Տնային կենդանու անցանկալի վերարտադրությունը կանխող միջոցառումների ժամանակին չձեռնարկելը,*
5.1.5. *Ապահովագրված տնային կենդանու հղիություն կամ դրա ընդհատման հետևանքով պատահարներ ու բարդացումներ:*

5.2. Եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով, ապա ՉԵՆ ՀԱՏՈՒՑՎՈՒՄ հետևյալ ծախսերը.

5.2.1. պատվաստում,
5.2.2. այլ կանխարգելիչ միջոցառումների ծախսեր,
5.2.3. տզի խայթոց, իր բարդացումներով, եթե չեն իրականացվել համապատասխան կանխարգելիչ միջոցառումները (օր.՝ հատուկ դեղամիջոցի կամ վզկապի օգտագործում),
5.2.4. պրոթեզավորման հետ կապված ցանկացած ծախս, բացառությամբ՝ ազդրի, արմունկի կամ ծնկների հոդերի փոխարինման հետ կապված միջամտությունները,
5.2.5. վանդակների, զամբյուղների կամ անկողնային ցանկացած այլ պարագաների գնումը, որոնք անհրաժեշտ են բուժման կամ կենդանու ընդհանուր բարեկեցությունը բարելավելու համար,
5.2.6. վարքագծային կամ ֆինանսական խնդիրներից ազատվելու նպատակով էվթանազիան,
5.2.7. ցանկացած տեսակի սննդի, սննդային և (կամ) կենսաբանական ակտիվ հավելումների (վիտամիններ և այլն), կոսմետիկ կամ խնամքի պարագաների կամ հանքային աղերի ձեռքբերման ծախսեր,

5.2.8. առանց հենակետային անասնաբուժական կենտրոնի անասնաբույժի ցուցումների կատարված անասնաբուժական ծառայություններ, դեղորայք, հոսպիտալացում, հետազոտություններ կամ այլ պարագաների ձեռքբերում,

5.2.9. ապահովագրության ժամկետի ավարտից 30 (երեսուն) օր հետո կատարված բժշկական ծախսերը, որոնք կապված են Պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած Ապահովագրական պատահարի հետ:

5.2.10. ֆիզիոթերապևտիկ, վերականգնողական, սանատոր-առողջարանային միջոցառումներ կամ բուժում,

5.2.11. ոչ ավանդական, այլընտրանքային (ոչ գիտական) բուժում ու ախտորոշման մեթոդներ, փորձարարական կամ հետազոտական մեթոդներով բուժում, կազդուրման ավանդական համակարգեր, հեռաբժշկության հետ կապված ծառայություններ,

5.2.12. այնպիսի բժշկական ծառայություններից օգտվելու հետ կապված ծախսերը, որոնք ուղղակիորեն կապված չեն տեղի ունեցած դժբախտ պատահարի հետևանքով առաջացած վնասվածքների հետ,

5.2.13. վնասվածքի դեպքում Տնային կենդանուն անհապաղ բուժման չտանելու արդյունքում առաջացած հավելյալ ծախսերը,

5.2.14. համապատասխան մասնագետի կամ անասնաբույժի ցուցումներին չհետևելու արդյունքում առաջացած հավելյալ ծախսերը,

5.2.15. կատարված ցանկացած անասնաբուժական ծախս, եթե պատահարի պահին Տնային կենդանին չիպավորված չի եղել կամ եղել է, բայց Ապահովադիրը չիպավորման կարգով նախատեսված ձևով՝ ողջամիտ ժամկետներում, պատշաճ կերպով Ապահովագրողին չի ծանուցել համապատասխան չիպի համարը:

5.3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՀՐԱԺԱՐՎԵԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՎՃԱՐԵԼՈՒՑ, ԵԹԵ Ապահովադրի (Շահառուի) կողմից ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ գրավոր դիմում ներկայացնելուց հետո 3 (երեք) ամսվա ընթացքում Ապահովագրողին չեն ներկայացվում ապահովագրական պահանջի կարգավորման համար սույն Պայմաններով սահմանված փաստաթղթերը: Սույն կետի բացառություն են կազմում այն դեպքերը, երբ Ապահովադիրը և (կամ) Շահառուն պատահարի հետևանքով հայտնվել են անգիտակից վիճակում կամ այնպիսի իրավիճակում, որն անհնարին է դարձնում Ապահովագրողին նշված կարգով անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացումը կամ Ապահովադիրը տեղյակ չի եղել և չէր կարող տեղյակ լինել ապահովագրական պատահարի մասին՝ Շահառուի կողմից նրան չտեղեկացնելու կամ այլ պատճառով: Ապահովադիրը և (կամ) Շահառուն կրում է Ապահովագրողին նրանց կողմից պահանջվող փաստաթղթերի ներկայացման անհնարինության ապացուցման պարտականությունը: Սույն կետով նախատեսված պարտականությունը անհնարին դարձնող հանգամանքների վերացման դեպքում Ապահովադիրը և (կամ) Շահառուն պարտավոր են անհապաղ (առաջին իսկ հնարավորության դեպքում) պահանջվող փաստաթղթերը ներկայացնել Ապահովագրողին:

ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

6.1. Ապահովագրական գումարը Կողմերի փոխադարձ համաձայնությամբ Պայմանագրում սահմանված դրամական գումարն է, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում վճարել ապահովագրական հատուցում:

6.2. Պայմանագրով Ապահովագրական գումարը կարող է սահմանված լինել ինչպես ընդհանուր գումարի տեսքով, այնպես էլ առանձին տեսակի վնասվածքների համար առանձին-առանձին: Պայմանագրով կարող է սահմանվել յուրաքանչյուր ապահովագրական հատուցման իրականացման կամ առանձին տեսակի վնասվածքների համար ապահովագրական հատուցման իրականացման առավելագույն շեմ մեկ ապահովագրական պատահարի համար:

6.3. Ապահովագրական գումարը նվազում է իրականացված ապահովագրական հատուցման չափով:

6.4. Ապահովադիրը կարող է հանդես գալ Ապահովագրական գումարը մեծացնելու պահանջով՝ վճարելով համապատասխան չափով Ապահովագրավճար:

6.5. Վճարվող ապահովագրական հատուցման չափը չի կարող գերազանցել տվյալ պահին գործող Ապահովագրական գումարի չափը:

ԲԱԺԻՆ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ, ՉՎՃԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

7.1. Ապահովագրավճարը հաշվարկվում է Ապահովագրողի կողմից Պայմանագրի ողջ ժամկետի համար Ապահովագրական սակագնի հիման վրա, որը ձևավորվում է Ապահովադրի կողմից ընտրված ծածկույթից, Չհատուցվող գումարի տեսակից ու մեծությունից, Պայմանագրի գործողության ժամկետից, ինչպես նաև ապահովագրական ռիսկի վրա ազդող այլ գործոններից:

7.2. Ապահովագրավճարն Ապահովադրի կողմից կարող է վճարվել միանվագ (միանգամյա վճարումով) կամ մաս-մաս, կանխիկ՝ կամ փոխանցումով՝ Պայմանագրով սահմանված կարգով:

7.3. Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում Ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական Ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը համաձայն սույն Պայմանների 7.5 կետի, եթե Պայմանագրով նախատեսված չէ այլ ժամկետ կամ Ապահովագրավճարի վճարման տարաժամկետման հնարավորություն:

7.4. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՀՐԱԺԱՐՎԵԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒՑ, եթե Ապահովագրական պատահարի պահին Ապահովադիրն Ապահովագրավճարի գծով Ապահովագրողի նկատմամբ ունի ժամկետանց պարտավորություններ: Սույն կետով սահմանված Ապահովագրողի իրավունքը գործում է մինչև Ապահովադրի կողմից Ապահովագրավճարի գծով ունեցած պարտավորության մարման օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրվա ժամը 00:00-ն:

7.5. Եթե Ապահովադիրը Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում չի վճարել միանվագ կամ հերթական Ապահովագրավճարը, ապա ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ Ապահովագրավճարի վճարման համար սահմանված ժամկետից 5 (հինգ) օր հետո միակողմանի լուծելու Պայմանագիրը: Այս դեպքում Ապահովադրի կողմից Պայմանագրի համար վճարված Ապահովագրավճարը չի վերադարձվում:

ԲԱԺԻՆ 8. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳ, ԺԱՄԿԵՏ, ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ

8.1. Պայմանագիրն Ապահովագրողի և Ապահովադրի միջև կնքված փաստաթուղթ է, ըստ որի Ապահովագրողն Ապահովագրավճարի դիմաց պարտավորվում է Պայմանագրով և սույն Պայմաններով սահմանված կարգով Ապահովադրին կամ Շահառուին տրամադրել ապահովագրական հատուցում:

8.2. Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ Ապահովադրի կողմից բանավոր կամ գրավոր դիմումի հիման վրա:

8.3. Սույն Պայմանները կցվում են Պայմանագրին՝ հանդիսանալով դրա անբաժանելի մասը և պարտադիր են Կողմերի համար:

8.4. Պայմանագիրը կնքելու համար ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ Ապահովադրից պահանջել.

8.4.1. Ապահովադրի անձը հաստատող փաստաթուղթ,

8.4.2. Ապահովագրվող կենդանու անձնագիրը,

8.4.3. Նույնականացման չիպի համարը,

8.4.4. այլ փաստաթղթեր և տեղեկատվություն, որոնք անհրաժեշտ են ապահովագրական ռիսկի ճշգրիտ գնահատման համար:

8.5. Պայմանագրի գործողության ժամկետը սահմանվում է Պայմանագրով՝ Կողմերի համաձայնությամբ:

8.6. Ապահովագրության տարածք է համարվում Հայաստանի Հանրապետությունը և Արցախի Հանրապետությունը, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

8.7. Պայմանագրի և սույն Պայմանների միջև անհամապատասխանությունների դեպքում գերակա է Պայմանագիրը, իսկ սույն Պայմանների (Պայմանագրի) և դրա թարգմանությունների տարընթերցման դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տարբերակին:

ԲԱԺԻՆ 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳ

9.1 Պայմանագիրը վաղաժամկետ դադարում է.

9.1.1 եթե Տնային կենդանին կյանքից հեռացել է,

9.1.2 եթե վերացել է Ապահովագրական պատահարի վրա հասնելու հնարավորությունը և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է Ապահովագրական պատահարից տարբեր այլ հանգամանքների բերումով

9.1.3 եթե Ապահովագրողի կողմից կատարվել են Պայմանագրով նախատեսված բոլոր պարտավորությունները, (այդ թվում, եթե Ապահովագրողի կողմից իրականացված Ապահովագրական հատուցումների հանրագումարը հավասար է Պայմանագրով սահմանված Ապահովագրական գումարի չափին),

9.1.4 ՀՀ օրենսդրությամբ, Պայմաններով կամ Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

9.2 Ապահովագրողի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին վերադարձվում է Ապահովագրավճարն ամբողջությամբ՝ բացառությամբ Պայմանագրով և սույն Պայմաններով նախատեսված դեպքերի:

9.3 Ապահովադրի կողմից ՀՀ օրենսդրությամբ, Պայմաններով կամ Պայմանագրով նախատեսված իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով Ապահովագրողը վաղաժամկետ լուծում է Պայմանագիրը և Ապահովադրին վերադարձնում Պայմանագրի գործողության չլրացած ժամկետին համամասնորեն հաշվարկված Ապահովագրավճարը, որի հիմք է հանդիսանում Ապահովագրավճարի 75 (յոթանասունհինգ) տոկոսը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ (Պայմանագրով սահմանված Ապահովագրավճար * 75 (յոթանասունհինգ) տոկոս / Պայմանագրի գործողության օրեր) * Պայմանագրի չլրացած օրեր, իսկ Ապահովադրի կողմից Պայմանների 9.10.2.4 կետով նախատեսված իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում վճարված ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐՆ ԱՊԱՀՈՎԱԴՐԻՆ ԵՆԹԱԿԱ ՉԷ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ:

9.4 Ապահովադիրն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին ոչ պակաս, քան 15 (տասնհինգ) օր առաջ գրավոր ծանուցելով Ապահովագրողին:

9.5 Ապահովադրի նախաձեռնությամբ Պայմանագիրը վաղաժամկետ լուծվելու դեպքում՝ Ապահովադրին վերադարձվում է Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն հաշվարկված Ապահովագրավճարը: Այս դեպքում Ապահովադրին վերադարձվում է Պայմանագրի գործողության չլրացած ժամկետին համամասնորեն հաշվարկված Ապահովագրավճարը, որի հիմք է հանդիսանում Ապահովագրավճարի 75 (յոթանասունհինգ) տոկոսը՝ (Պայմանագրով սահմանված Ապահովագրավճար * 75 (յոթանասունհինգ) տոկոս/Պայմանագրի գործողության օրեր) * Պայմանագրի չլրացած օրեր, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

9.6 Այն դեպքում, երբ Ապահովադրի կողմից Պայմանագրի վաղաժամկետ լուծումը պայմանավորված է Ապահովագրողի կողմից Պայմանագրի պայմանների խախտմամբ, ապա վերջինս Ապահովադրին է վերադարձնում վճարված Ապահովագրավճարը՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

9.7 Ապահովադրի կողմից Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում վերջինիս վճարված Ապահովագրավճարը չի վերադարձվում, եթե Ապահովադիրը տվյալ Պայմանագրի գծով դիմել է ապահովագրական հատուցում ստանալու համար և ապահովագրական հատուցման պահանջն Ապահովագրողի կողմից դեռևս չի կարգավորվել (մինչև ապահովագրական պահանջի կարգավորումը) կամ ստացել է ապահովագրական հատուցում, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

9.8 Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ, եթե Կողմերից մեկը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում՝ խախտումը հայտնաբերելու պահից եռամսյա ժամկետում: Այս դեպքում վճարված Ապահովագրավճարն Ապահովադրին ենթակա չէ վերադարձման եթե խախտումը թույլ է տվել Ապահովադիրը:

9.9 Պայմանագիրն առոչինչ կամ անվավեր է համարվում ՀՀ օրենսդրությամբ, Պայմաններով կամ Պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:

ԲԱԺԻՆ 10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10.1. ԱՊԱՀՈՎԱԴԻՐՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

10.1.1. Ապահովագրողից պահանջել պետական գրանցումը և գործունեության թույլտվությունը հավաստող փաստաթղթերը (պետական գրանցման վկայական, լիցենզիա),

10.1.2. Ապահովագրողի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական միջնորդի (բրոքեր կամ գործակալ) միջոցով,

10.1.3. Պայմանագրում նշել անձի (Շահառու), ով Ապահովագրական պատահարի առաջացման դեպքում իրավունք կունենա ստանալ ապահովագրական հատուցում,

10.1.4. Պայմանագրով նախատեսված դեպքերում ստանալ ապահովագրական հատուցում,

10.1.5. Պայմանագիրը կորցնելու դեպքում՝ գրավոր դիմումի հիման վրա ստանալ դրա կրկնօրինակը,

10.1.6. Պայմաններով սահմանված կարգով վաղաժամկետ լուծել Պայմանագիրը:

10.2. ԱՊԱՀՈՎԱԴԻՐԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

10.2.1. Պայմանագրում նշված կարգով և ժամկետում վճարել Ապահովագրավճարը կամ դրա մի մասը,

10.2.2. Պայմանագրի կնքման ժամանակ Ապահովագրողին հայտնել ապահովագրական ռիսկի գնահատման համար էական նշանակություն ունեցող՝ իրեն հայտնի բոլոր տեղեկությունները,

10.2.3. ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ գրավոր դիմում ներկայացնելուց հետո 3 (երեք) ամսվա ընթացքում Ապահովագրողին ներկայացնել նաև ապահովագրական պահանջի կարգավորման համար սույն Պայմաններով սահմանված փաստաթղթերը,

10.2.4. Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրողին հայտնել Պայմանագրի կնքման ժամանակ Ապահովագրողին ներկայացված հանգամանքների, ռիսկի աստիճանի փոփոխության մասին տեղեկատվություն, ինչպես նաև հետևյալ դեպքերում.

9.2.4.1. Պահողի գործունեության վայրի կամ բնակության վայրի փոփոխություն,

9.2.4.2. Տնային կենդանու բնակության պայմանների փոփոխություն,

9.2.4.3. Տնային կենդանու առողջության վատթարացում,

9.2.4.4. այլ Տնային կենդանու ձեռքբերում:

10.3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

10.3.1. Պայմանագիր կնքելուց առաջ պահանջել համապատասխան փաստաթղթեր,

10.3.2. Ապահովադրի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական միջնորդի (բրոքերի կամ գործակալի) միջոցով,

10.3.3. ստուգել Ապահովադրի կողմից ներկայացված տեղեկությունները, ինչպես նաև Ապահովադրի կողմից Պայմանագրի պահանջների և Պայմանների կատարումը,

10.3.4. պահանջել Ապահովագրավճարի՝ ժամանակին և պատշաճ կերպով վճարումը,

10.3.5. հարցում կատարել համապատասխան իրավասու մարմիններին տեղի ունեցած դեպքի փաստը և պատճառները հաստատող փաստաթղթերը կամ այլ տեղեկություններ ստանալու նպատակով,

10.3.6. ապահովագրական հատուցման կամ մասնակի հատուցման վերաբերյալ որոշման կայացումից հետո կասեցնել կամ երկարաձգել ապահովագրական հատուցման գործընթացը, եթե ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց պատճառով Ապահովագրողն անհրաժեշտ է համարում Ապահովագրական պատահարի վերաբերյալ ստանալ հավելյալ տեղեկություն,

10.3.7. մերժել հատուցման վճարումը, եթե Ապահովադիրը Պայմանագրի կնքման պահին և (կամ) դրա գործողության ընթացքում հայտնել է Տնային կենդանու առողջական վիճակի մասին կեղծ տեղեկություններ կամ թաքցրել ռիսկի աստիճանի վրա ազդող տեղեկություններ,մերժել հատուցման վճարումը ՀՀ օրենսդրությամբ, Պայմանագրով կամ Պայմաններով սահմանված կարգով,

10.3.8. ապահովագրական հատուցման ենթակա գումարը վճարելիս այն հաշվանցել Պայմանագրի գծով կետանցված Ապահովագրավճարի հետ,

10.3.9. պահանջել Պայմանագրի դադարեցում կամ Պայմանագրի դրույթների փոփոխություն, եթե Պայմանագրի գործողության ընթացքում տեղի է ունեցել ապահովագրական ռիսկի աստիճանի մեծացում:

10.3.10. մերժել ապահովագրական հատուցման իրականացումը, եթե Ապահովադիրը և (կամ) Շահառուն չի կատարել կամ ոչ պատշաճ է կատարել սույն Պայմաններով սահմանված իր պարտավորությունները:

10.4. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

10.4.1. Ապահովադրին ծանոթացնել Պայմանների հետ և տրամադրել Պայմանների մեկ օրինակը,

10.4.2. Պայմանագրով և Պայմաններով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետում իրականացնել ապահովագրական հատուցում,

10.4.3. հատուցել Ապահովագրողի ցուցումներին համապատասխան կատարված Ապահովադրի այն ծախսերը, որոնք ողջամտության սահմաններում կատարվել են Ապահովագրական պատահարի արդյունքում վնասների կանխման կամ նվազեցման նպատակով: Նշված ծախսերի և ապահովագրական հատուցման (հատուցումների) հանրագումարը չպետք է գերազանցի Ապահովագրական գումարի չափը:

10.5. ԿՈՂՄԵՐԸ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆ չհրապարակել, չբացահայտել և (կամ) երրորդ անձին չտրամադրել իրենց հայտնի դարձած բժշկական, ֆինանսական և ապահովագրական գաղտնիք հանդիսացող և (կամ) պարունակող ցանկացած տեսակի տեղեկություն՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, և իրենց հայտնի դարձած տեղեկությունը չօգտագործել սեփական և (կամ) երրորդ անձանց շահերին, ինչպես նաև միմյանց տնտեսական դիրքին վնաս հասցնելու համար:

ԲԱԺԻՆ 11. ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

11.1. ՊԱՏԱՀԱՐԻ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԴԻՐԸ և (կամ) ՇԱՀԱՌՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է.

11.1.1. պատահարի մասին ԱՆՀԱՊԱՂ (ԱՌԱՋԻՆ ԻՍԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ) ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՆՇՎԱԾ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՈՎ ՏԵՂՅԱԿ ՊԱՀԵԼ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ, իսկ ՊԱՏԱՀԱՐԸ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ ՈՉ ՈՒՇ, ՔԱՆ 3 (ԵՐԵՔ) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՅԴ ՄԱՍԻՆ ԳՐԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՑՆԵԼ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Սույն ենթակետի առաջին մասով նախատեսված պարտականությունը չկատարելու դեպքում ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՉՎՃԱՐԵԼՈՒ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ: Սահմանված ժամկետում Ապահովագրողին գրավոր չտեղեկացնելու դեպքում ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՉՎՃԱՐԵԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ՝ բացառությամբ այն դեպքի, երբ Ապահովադիրը կամ Շահառուն ապացուցում են դրա անհնարինությունը:

11.1.2. պատահարի մասին ԱՆՀԱՊԱՂ (ԱՌԱՋԻՆ ԻՍԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ) ՀԱՅՏՆԵԼ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄՆԻՆ (Ոստիկանություն, հրշեջ ծառայություն և այլն), ստանալ համապատասխան փաստաթղթեր՝ բացառությամբ այն դեպքի, երբ Ապահովագրողն Ապահովադրին կամ Շահառուին համապատասխան գրավոր փաստաթղթով ազատել է սույն ենթակետում նշված պարտականությունները կատարելուց,

11.1.3. պատահարի առաջացման դեպքում անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել վնասի կանխման կամ նվազեցման ուղղությամբ՝ հետևելով Ապահովագրողի և համապատասխան իրավասու մարմնի ցուցումներին,

11.1.4. Ապահովագրական պատահարի հետ կապված գործընթացներում այլ կողմերի հետ հարաբերություններում ապահովել իր իրավունքների և շահերի պատշաճ պաշտպանությունը:

ԲԱԺԻՆ 12. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

12.1. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ ՀԱՏՈՒՑՈՒՄ Է ՀԵՏԵՎՅԱԼ ԴԵՊՔՈՒՄ՝

12.1.1. Ապահովագրված տնային կենդանու ստացած անասնաբուժական օգնության (անասնաբուժական ծառայությունների, ինչպես նաև դեղորայքի և բժշկական պարագաների) արժեքի վճարման ձևով՝ անմիջապես անասնաբուժական ծառայություն մատուցած հաստատությանը (կամ այլ հաստատությանը, այդ թվում՝ դեղատանը) համաձայն համապատասխան հաստատության կողմից ներկայացված հաշիվների,

12.1.2. Ապահովագրված տնային կենդանու ստացած անասնաբուժական օգնության (անասնաբուժական և այլ ծառայությունների ստացման, ինչպես նաև դեղորայքի և բժշկական պարագաների ձեռքբերման) համար Պահողի կողմից կատարված ծախսերի փոխհատուցման ձևով՝ Պայմաններով նախատեսված փաստաթղթերի հիման վրա:

12.2. Առանց վճարում կատարելու Պայմանագրով տրամադրվող ծառայություններից օգտվելու համար Պահողը պարտավոր է անասնաբուժական կամ այլ հաստատություններ դիմելուց առաջ նախապես տեղեկացնել (հեռախոսով, էլեկտրոնային փոստով կամ գրավոր) Ապահովագրողին և ստանալ Ապահովագրողի համաձայնությունը: Սույն կետով սահմանված կարգով Ապահովագրողի համաձայնությունը ստանալու և Ապահովագրողի հետ համաձայնեցված բուժհաստատությանը դիմելու դեպքում Պահողը Պայմանագրով հատուցվող ծառայությունների դիմաց վճարում չի իրականացնում (բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում է չհատուցվող գումար կամ սահմանված են հատուցման սահմանաչափեր), և ապահովագրական հատուցումը կատարվում է Պայմանների 12.1.1 ենթակետով սահմանված կարգով:

12.3. Պայմանների 12.2 կետով սահմանված կարգով Ապահովագրողի համաձայնությունը չստանալու դեպքում մատուցված բժշկական ծառայությունների դիմաց վճարում է Պահողը և ապահովագրական հատուցումը ստանում Պայմանների 12.1.2 ենթակետով սահմանված կարգով:

12.4. Պայմանագրով նախատեսված ծառայությունների տրամադրման համար Պայմանագրով կամ Պայմաններով կարող են սահմանվել որոշակի անասնաբուժական հաստատություն(ներ) (այդ թվում՝ դեղատներ) հենակետային հաստատություն(ներ), և այդ դեպքում Պայմանագրով նախատեսված ծառայությունները տրամադրվում են այդ հաստատության(ների) կողմից մատուցվող ծառայությունների սահմաններում և նրանց կողմից սահմանված կարգերով, և Պայմանագրի շրջանակներում ապահովագրական հատուցումը տրամադրվում է միայն այդ հաստատությունում(ներում) ստացված ծառայությունների դիմաց:

12.5. Ապահովագրողն ապահովագրական պատահարի կարգավորման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ստանալուց հետո ոչ ուշ, քան 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է քննել հայտը և կայացնել ապահովագրական հատուցում վճարելու կամ հատուցման վճարումը մերժելու մասին որոշում:

12.6. Ապահովագրական հատուցումը կատարվում է հատուցման մասին որոշման կայացումից հետո ոչ ուշ, քան 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

12.7. Ապահովագրական պատահարի հետևանքով անասնաբուժական ծախսերի դեպքում՝ Ապահովագրական հատուցում ստանալու համար Շահառուն պարտավոր է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

12.7.1. Պայմանագրի բնօրինակը (Ապահովագրողի պահանջով)՝ ստորագրված Ապահովադրի կողմից,

12.7.2. ապահովագրական հատուցում ստանալու դիմում (Ապահովագրողի կողմից սահմանված ձևով) ապահովագրական պատահարի մանրամասն նկարագրությամբ և ապահովագրական հատուցում ստանալու եղանակների նշմամբ (կանխիկ կամ բանկային փոխանցումով),

12.7.3. անասնաբուժական հաստատության կամ անասնաբույժի կնիքով և իրավասու անձի ստորագրությամբ հաստատված փաստաթուղթ (էպիկրիզ, քաղվածք ամբուլատոր-բժշկական քարտից, բժշկի եզրակացություն, բժշկական հաստատության կողմից տրված տեղեկանք, հիվանդության պատմություն և այլն), որը պետք է պարունակի, կատարված լաբորատոր կամ գործիքային հետազոտությունները, միջամտությունները, փորահատությունը, վերջնական ախտորոշումը և նշանակված բուժումը, անասնաբույժի անուն ազգանունը և կոնտակտային տվյալները,

12.7.4. կատարված վճարումը հավաստող փաստաթղթերի՝ ՀԴՄ կտրոնի՝ ծախսերի մանրամասն բացվածքի հետ միասին (դրամարկղի մուտքի անդորրագրի (օրդեր) և այլն), կանխիկ վճարման հաշվի բնօրինակները,

12.7.5. ապահովագրական հատուցում ստացող անձի ինքնությունը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ պատճենը,

12.7.6. ապահովագրական հատուցման որոշման կայացման համար այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

12.8. Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է Պայմաններով սահմանված ապահովագրական հատուցման համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել ապահովագրական հատուցման դիմումի ներկայացման օրվանից 60 (վաթսուն) օրվա ընթացքում: Ապահովագրողը, ելնելով տվյալ գործի հանգամանքներից, կարող է այդ ժամկետը երկարաձգել մինչև 6 (վեց) ամիս, եթե Ապահովադիրը (Շահառուն) գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարաձգելու մասին:

12.9. Անհրաժեշտության դեպքում Ապահովագրողը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկություններ է ստանում իրավապահ մարմիններից, անասնաբուժական կամ բժշկական հաստատություններից և այլ կազմակերպություններից՝ կապված ապահովագրական պատահարի հանգամանքների հետ:

12.10. Ապահովագրական հատուցման մերժման դեպքում Ապահովագրողը կայացնում է պատճառաբանված որոշում, որը հնգօրյա ժամկետում պատվիրված նամակով ուղարկվում է (կամ տրամադրվում է առձեռն) Ապահովադրին (Շահառուին):

12.11. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՀԵՏԱՁԳԵԼ Ապահովագրական հատուցման որոշման կայացումը կամ վճարումը .

12.11.1. եթե նրա մոտ առաջացել են հիմնավոր կասկածներ Պահողի (Շահառուի) ապահովագրական հատուցում ստանալու իրավունքի վերաբերյալ,

12.11.2. եթե առկա է տվյալ պատահարի կարգավորման հետ ուղղակի կամ անուղղակի կերպով առնչվող հարուցված քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ,

12.11.3. մինչև Ապահովագրողի կողմից ապահովագրական պատահարի վերաբերյալ տեղեկություն ունեցող կազմակերպություններից փաստաթղթերի ստացումը, ինչպես նաև մինչև ապահովագրական պատահարի վկաներից վկայությունների ստացումը,

12.12. Ապահովագրական հատուցում ստանալու համար ներկայացված բոլոր բժշկական փաստաթղթերը պետք է պարունակեն Տնային կենդանու անունը, տեսակը, չիպի համարը, տարիքը, հայտարարված պատահարի ամսաթիվը և հանգամանքները, նշանակված և իրականացված բուժումը, բուժման սկիզբը և ավարտը, կատարված անասնաբուժական միջոցառումների անվանումները, անասնաբույժի կողմից սահմանված ախտորոշումը՝ հաստատված պրակտիկայում ընդունված հետազոտությունների մեթոդներով, բոլոր ախտորոշիչ հետազոտությունների արդյունքները, իրականացված փորահատության արձանագրությունը:

12.13. ԱՊԱՀՈՎԱԴԻՐԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է Ապահովագրողի պահանջով տրամադրել նաև այնպիսի փաստաթղթեր և տեղեկատվություն, որոնք ուղղակի կապ ունեն տեղի ունեցած պատահարի հետ կամ կարևոր են վնասի առաջացման պատճառների և (կամ) չափի հիմնավորման համար:

12.14. Ապահովադիրը պատահարի հետ կապված յուրաքանչյուր նամակի, պահանջի, հայցի, դատաքննության, հետաքննության կամ ցանկացած գործընթացի վերաբերյալ տեղեկությունները կամ փաստաթղթերը ՊԵՏՔ Է ԱՄԻՋԱՊԵՍ ՆԵՐԿԱՅԱՑՆԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ:

12.15. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ իրավասու պետական մարմիններից կամ պատահարի առաջացման հանգամանքներին ծանոթ այլ անձանցից ինքնուրույն պարզել պատահարի առաջացման պատճառները և հանգամանքները, ինչպես նաև հավաքագրել Ապահովագրական պատահարի հետ կապված տվյալներ:

12.16. Որպես ապահովագրական հատուցման վճարման պայման՝ ԱՊԱՀՈՎԱԴԻՐԸ (ՇԱՀԱՌՈՒՆ) ՉՊԵՏՔ Է ՍՏԱՆՁՆԻ ՏՎՅԱԼ ՊԱՏԱՀԱՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՈՐԵԷ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՉՊԵՏՔ Է ԿԱՏԱՐԻ ՈՐԵԷ ԱՌԱՋԱՐԿ, ԽՈՍՏՈՒՄ ԿԱՄ ՎՃԱՐՈՒՄ ԿԱՄ ԿԱՏԱՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹ ԿՐՈՂ ՈՐԵԷ ԾԱԽՍ՝ ԱՌԱՆՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՐԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱՆ ՉՊԵՏՔ Է ԳՈՐԾԻ Ի ՎՆԱՍ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ՇԱՀԵՐԻ և ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ՊԵՏՔ Է ՏՐԱՄԱԴՐԻ ՎԵՐՋԻՆԻՍ ԿՈՂՄԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ:

12.17. Ապահովագրողն Ապահովագրական պատահարին առնչվող և սույն Պայմաններով սահմանված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է ապահովագրական հատուցում տրամադրելու կամ մերժելու վերաբերյալ որոշում:

12.18. Ապահովագրողը, Ապահովադրի (Շահառուի) պահանջով ապահովագրական հատուցում տրամադրելու վերաբերյալ եզրակացությունը (որոշումը) հաստատելուց հետո առավելագույնը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային տարբերակով կամ փոստային ծառայության միջոցով տրամադրում է Ապահովադրին (Շահառուին):

12.19. Ապահովագրական հատուցման նվազեցման կամ հատուցման մերժման դեպքում Ապահովագրողը կայացնում է պատճառաբանված որոշում, որը հնգօրյա ռետում պատվիրված նամակով առաքվում է Ապահովադրին (Շահառուին)՝ նրա մշտական բնակության կամ գործունեության հասցեով:

12.20. Ապահովագրական հատուցում տրամադրելու վերաբերյալ որոշում կայացնելու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը պարտավոր է միանվագ իրականացնել ապահովագրական հատուցման վճարումը, եթե Ապահովագրողը և Ապահովադիրը (Շահառուն) ապահովագրական հատուցման վճարման այլ կարգ կամ ժամկետ չեն համաձայնեցրել:

12.21. Այն դեպքում, երբ պատահարի առնչությամբ ներկայացվել է քրեական գործ հարուցելու վերաբերյալ հաղորդում կամ քաղաքացիական կամ վարչական հայցի շրջանակում վիճարկվում են տվյալ պատահարի հանգամանքները, և ապահովագրական հատուցում տրամադրելու կամ մերժելու վերաբերյալ որոշման կայացումը կախված է այդ գործի ելքից, ապա ապահովագրական հատուցում տրամադրելու կամ մերժելու վերաբերյալ որոշում կայացնելու, ինչպես նաև այդ որոշման մասին ծանուցելու սույն Պայմաններով սահմանված ժամկետները կասեցվում են մինչև Ապահովագրողի կողմից տվյալ գործն ըստ էության լուծող և տվյալ գործով օրինական ուժի մեջ մտած իրավասու մարմնի կողմից կայացված վերջնական ակտի ստացումը:

ԲԱԺԻՆ 13. ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԵՏՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ)

13.1. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովադրին պատճառված վնասից բխող նրա (Շահառուի) պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է Ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մասով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով: Դիտավորյալ վնաս պատճառած անձի նկատմամբ պահանջի իրավունքն Ապահովագրողին անցնելը բացառող Պայմանագրի պայմանն առոչինչ է:

13.2. Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է Ապահովագրողին փոխանցել բոլոր փաստաթղթերը և ապացույցները, ինչպես նաև տրամադրել իրեն հայտնի բոլոր տվյալները, որոնք անհրաժեշտ են Ապահովագրողին սուբրոգացիա իրականացնելու համար:

13.3. Եթե Ապահովադիրը հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված կամ հատուցվելիք վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իր իրավունքից կամ այդ իրավունքի իրականացումը անհնարին է դարձել Ապահովադրի (Շահառուի) մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան չափով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելու պարտավորությունից, իսկ ապահովագրական հատուցումն արդեն վճարված լինելու դեպքում՝ Ապահովագրողն իրավունք ունի պահանջել Ապահովադրից (Շահառուից) վերադարձնել ավելորդ վճարված ապահովագրական հատուցման գումարը:

ԲԱԺԻՆ 14. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

14.1. Սույն Պայմաններով և Պայմանագրով սահմանված պարտավորությունները մասնակի կամ լրիվ չկատարելու դեպքում Պայմանագրի կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե այն հետևանք է անհաղթահարելի ուժի, մասնավորապես՝ ջրհեղեղի, պայթյունի, հրդեհի, երկրաշարժի, այլ տարերային աղետների, պատերազմի, ռազմական գործողությունների, զինված հարձակման, զանգվածային անկարգությունների, ժողովրդական հուզումների, ահաբեկչության, գործադուլների, արտակարգ դրության, տնտեսական շրջափակման, հաղորդակցման միջոցների աշխատանքի դադարեցման, կառավարության կողմից սահմանված այլ սահմանափակումների և արգելանքների կամ նման այլ իրադարձությունների:

14.2. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը կամ դրա հետևանքները երկարաձգվում են 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղեկացնելով Պայմանագրի մյուս Կողմին:

14.3. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը սույն Պայմաններով և Պայմանագրով սահմանված պարտականությունների իրականացման վրա պարտավոր է ապացուցել այն Կողմը, որի պարտականությունների իրականացմանն է խոչնդոտում նման ազդեցությունը:

ԲԱԺԻՆ 15. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ

15.1. Պայմանագրի գործողության ընթացքում առաջացող բոլոր վեճերը լուծվում են Կողմերի միջև անմիջական բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու միջոցով կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համաձայն:

15.2. Վեճերի առաջացման դեպքում Պայմաններով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԲԱԺԻՆ 16. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

16.1. Պատասխանատվության ապահովագրության լրացուցիչ պայմաններով (այսուհետ՝ Լրացուցիչ պայմաններ) Ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Պահողի՝ ՀՀ օրենսդրությանը կամ այլ իրավական ակտերին չհակասող գույքային շահերը, որոնք կապված են վերջինիս պատկանող Տնային կենդանու կողմից երրորդ անձանց կյանքին, առողջությանը կամ կենդանուն հասցված վնասի հատուցման հետ:

16.2. Լրացուցիչ պայմանների շրջանակներում ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԵՆ Տնային կենդանիները, որոնք պատկանում են հետևյալ ցեղատեսակներից որևէ մեկին կամ համարվում են դրանց խառնուրդ՝ բանդոգ, ամերիկյան պիտբուլտերիեր, անգլիական մաստիֆ, բրազիլական բուլդոգ, բուլիկուտտա, բուլմաստիֆ, բուլտերիեր, գայլաշուն, շնագայլ, գյուլ դոնգ, կովկասյան հովվաշուն, կանարյան շուն, քեյն կորսո, մոսկովյան պահակաշուն, գերմանական դոգ, պիտբուլմաստիֆ, ռոթվեյլեր, ռումինական հովվաշուն, տոսա ինու, ֆիլա բրազիլեյրո:

16.3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ և ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԵՆ Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրության տարածքում Տնային կենդանու ագրեսիվ և (կամ) անկանխատեսելի գործողությունների հետևանքով, Պահողի ոչ դիտավորյալ մեղավորությամբ երրորդ անձանց կյանքին, առողջությանը կամ նրանց կենդանու առողջությանը հասցված վնասները:

16.4. Վնասի պատճառման փաստը պետք է հաստատվի դատական մարմինների (դատարաններ, արբիտրաժներ և այլն) ուժի մեջ մտած որոշումով կամ արտադատական կարգով՝ Ապահովագրողի համաձայնությամբ Պահողի կողմից երրորդ անձանց կյանքին, առողջությանը, կենդանուն հասցված վնասի հատուցման անձնական կամ գույքային հայտի ընդունման միջոցով, կամ Ապահովագրողի համաձայնությամբ և ներկայությամբ ստորագրված համաձայնագրով:

16.5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ՉԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ և ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԵՆ ԴԵՊՔԵՐԸ, որոնք կապված են.

16.5.1. ՀՀ գործող օրենսդրությամբ պարտադիր պատվաստումների չանցկացման հետ, որն ուղղակիորեն պատճառ է հանդիսացել պատահարի առաջացմանը,

16.5.2. տրանսպորտային միջոցների տնօրինման, տիրապետման կամ օգտագործման հետ,

16.5.3. Պայմանագրով կամ Ապահովադրի (Պահողի) հետ համաձայնությամբ ծագած ֆինանսական պարտավորությունների հետ, ինչպես նաև վճարումների հետ, որոնք կատարվել են բնեղեն ձևով պարտավորությունների կատարման փոխարեն կամ որպես պատժամիջոցներ, կամ բաց թողնված օգուտի վերաբերյալ պահանջներ,

16.5.4. վնասի գծով պահանջի հետ, որը գերազանցում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված ծավալները և չափերը (գերազանցող մասով),

16.5.5. միևնույն Պայմանագրով Պահողի և նրա ընտանիքի անդամների միմյանց դեմ ներկայացված

պահանջների հետ,

16.5.6. պատերազմական գործողությունների, ապստամբությունների, քաղաքացիական հուզումների, զինված խմբավորումների կամ ահաբեկիչների հետևանքով կամ պատճառով առաջացած վնասների հետ,

16.5.7. կենդանիների (թռչունների) պահպանման, տնօրինման՝ օրենսդրությամբ սահմանված անվտանգության կանոնների խախտման հետ,

16.5.8. եթե պատահարի պահին Տնային կենդանին չիպավորված չի եղել կամ եղել է, բայց Ապահովադիրը նախատեսված ձևով՝ ողջամիտ ժամկետներում, պատշաճ կերպով Ապահովագրողին չի ծանուցել համապատասխան չիպի համարը,

16.5.9. Ապահովագրության տարածքից դուրս տեղի ունեցած պատահարների հետ:

16.6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԴԻՐԸ, Ի ԼՐՈՒՄՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ 11.1 ԿԵՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՊԱՐՏԱՎՈՐ Է ՆԱԵՎ.

16.6.1. ԱՆՀԱՊԱՂ ՏԵՂԵԿԱՑՆԵԼ Ապահովագրողին սույն Լրացուցիչ պայմանների համաձայն ապահովագրական պատահարի բնույթ ունեցող դեպքի կապակցությամբ իրեն ներկայացվող բոլոր պահանջների վերաբերյալ,

16.6.2. Ապահովագրողին ցուցաբերել աջակցություն՝ կազմակերպելու և իրականացնելու արտադատական պաշտպանություն՝ վնասի հատուցման պահանջի ներկայացման դեպքում,

16.6.3. Ապահովագրողին ներկայացնել իրեն հասանելի ամբողջական տեղեկատվությունը և փաստաթղթերը, որոնք հնարավորություն կտան բացահայտելու ապահովագրական պատահարի բնույթը, պատճառները, հետևանքները և վնասի չափը,

16.6.4. Չիրականացնել հատուցումներ, մասնակի կամ ամբողջությամբ չընդունել մեղավորություն, ինչպես նաև, առանց Ապահովագրողի համաձայնության չստանձնել ուղղակի կամ անուղղակի պարտավորություններ՝ երրորդ անձանց կողմից ներկայացված պահանջի կարգավորման համար:

16.7. Ապահովագրական հատուցման չափը հաշվարկվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված վնասների հատուցման չափով, և իրականացվում է ապահովագրական պատահարի փաստի, պատճառների և հանգամանքների պարզելուց և վնասի չափի որոշումից հետո, որոնք կատարվում են իրավասու մարմինների կողմից տրամադրված փաստաթղթերի, ինչպես նաև վնասի չափը և պատահարի հանգամանքները հավաստող այլ փաստաթղթերի հիման վրա:

16.8. Այն դեպքում, երբ բացակայում է Ապահովագրական պատահար տեղի ունենալու մասին վեճ, տուժողի մոտ առկա է Ապահովագրական հատուցման ստացման իրավունք, իսկ Ապահովադրի մոտ՝ այն հատուցելու պարտավորություն, առկա է Ապահովագրական պատահարի, վնասի և վնասի չափի միջև պատճառահետևանքային կապ, և առկա է Ապահովագրողի համաձայնությունը, ապա հայտարարված պահանջները բավարարվում են, և ապահովագրական հատուցումը վճարվում է արտադատական (կամավոր) կարգով:

16.9. Ապահովագրական հատուցման արտադատական կարգով վճարման դեպքում վնասի չափի որոշումը և ապահովագրական հատուցման չափը որոշում է Ապահովագրողը՝ հիմք ընդունելով պատահարի փաստերի, պատճառների, հանգամանքների և հետևանքների վերաբերյալ իրավասու մարմինների փաստաթղթերը (բժշկական հաստատություններ, բժշկական-աշխատանքային մասնագիտական խորհուրդներ, սոցիալական ծառայության մարմիններ և այլն), հաշվի առնելով տեղեկանքները, հաշիվ-ապրանքագրերը, նախահաշիվները և կատարված/անհրաժեշտ կատարվելիք ծախսերը հավաստող այլ փաստաթղթերը:

16.10. Ապահովագրական պատահարի պատճառների և հանգամանքների կամ վնասի չափի վերաբերյալ վեճերի առկայության դեպքում ապահովագրական հատուցումն իրականացվում է դատարանի (կամ արբիտրաժի) կողմից օրինական ուժի մեջ մտած որոշման կամ վճռի հիման վրա, կամ Ապահովագրողի համաձայնությամբ և ներկայությամբ ստորագրված համաձայնագրի հիման վրա:

16.11. Ապահովագրական հատուցումն իրականացվում է Ապահովագրողի պահանջով հետևյալ փաստաթղթերը ներկայացնելու դեպքում (Ապահովագրողի որոշմամբ նշված փաստաթղթերի ցանկը կարող է կրճատվել).

16.11.1. Ապահովադրի կամ նրա ներկայացուցչի կողմից պետք է ներկայացվեն

16.11.1.1. Ապահովագրական պատահարի մասին տեղեկացում Ապահովագրողին՝ Պայմանագրով և (կամ) Պայմաններով սահմանված ձևով և ժամկետներում,

16.11.1.2. Ապահովագրության Պայմանագրի բնօրինակը (Ապահովագրողի պահանջով)՝ ստորագրված Ապահովադրի կողմից,

16.11.1.3. Իրավասու մարմինների տեղեկանքներ և այլ փաստաթղթեր, որոնք հաստատում են երրորդ անձանց վնաս պատճառած Ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը (ԱԻՆ, ՈԾ և այլն), և որոնք թույլ են տալիս պարզել պատահարի հանգամանքները, բնույթը և հետևանքները, ինչպես նաև՝ վնասի չափը և մեղավոր կողմին,

16.11.1.4. Ապահովադրի ծախսերի փաստը, չափը և նպատակը հավաստող փաստաթղթեր, որոնք Լրացուցիչ պայմանների և(կամ) Պայմանագրի համաձայն ենթակա են հատուցման,

16.11.1.5. Վնաս կրած երրորդ անձի պահանջ (գրավոր հայտ),

16.11.1.6. Ապահովագրողի պահանջով՝ դատարանի կողմից տրված ուժի մեջ մտած որոշում:

16.11.2. Վնաս կրած երրորդ անձանց կամ նրանց ներկայացուցիչների կողմից պետք է ներկայացվեն.

16.11.2.1. Ապահովագրական պատահարի մասին դիմում՝ Ապահովագրողի կողմից սահմանված կամ Ապահովագրողի հետ համաձայնեցված ձևով կամ եղանակով՝ ապահովագրական պատահարի տեղի ունենալու կամ բացահայտելու ամսաթվից հետո 3 ամսվա ընթացքում: Սույն ժամկետի չպահպանման դեպքում Ապահովագրողը իրավունք ունի մերժել ապահովագրական հայտը՝ ժամկետի ուշացման համար հիմնավոր պատճառաբանություն չստանալու դեպքում:

16.11.2.2. Ապահովագրողի պահանջով՝ օրինական ուժի մեջ մտած դատական որոշման (վճռի) վավերացված կրկնօրինակը և կատարման ակտի բնօրինակը (դատական կարգավորման դեպքում, բացառությամբ հաշտության համաձայնագրով կարգավորման դեպքում),

16.11.2.3. Երրորդ անձանց պատճառված վնասի փաստը հավաստող տեղեկանք կամ փաստաթուղթ՝ իրավասու մարմինների կողմից (ԱԻՆ, ՈԾ և այլն), որոնք հնարավորություն կտան պարզել պատահարի բնույթը, հանգամանքները և հետևանքները, վնասի մասշտաբը և մեղավոր կողմերին,

16.11.2.4. Վնաս կրած երրորդ անձի ներկայացուցչի կողմից ապահովագրական հատուցումը ստանալու դեպքում՝ նոտարով հաստատված լիազորագիր,

16.11.2.5. Վնաս կրած երրորդ անձը՝ ապահովագրական պատահարի արդյունքում առողջությանը հասցված վնասների համար լրացուցիչ ծախսերի, բուժման և դեղորայքի համար (որոնց համար պետական պատվերի շրջանակներում չի ստանում բուժօգնություն) ներկայացնում է.

- Բժշկական հաստատության կողմից տրամադրված հիվանդության պատմության քաղվածք,
- Բժշկական հաստատության ծառայությունների համար կատարված ծախսերը հավաստող փաստաթղթեր,
- Դեղորայքի ձեռքբերումը հավաստող փաստաթղթեր:

16.12. Ապահովագրողն ապահովագրական հատուցումն իրականացնում է հետևյալ չափերով՝

16.12.1. Երրորդ անձի կյանքին հասցված վնասի դեպքում՝ Ապահովագրական գումարի 100%-ի չափով,

16.12.2. Երրորդ անձիառողջությանը հասցված վնասի դեպքում՝ բուժման ծախսերի չափով,

16.12.3. Երրորդ անձի կենդանու առողջությանը/կյանքին հասցված վնասի դեպքում՝ բուժման ծախսերի/էվթանացիայի չափով,

16.12.4. Ապահովագրողի հետ համաձայնեցված ծախսերը՝ Ապահովադրի մեղավորության աստիճանի, պատահարի հանգամանքների և վնասի չափի նախնական բացահայտման նպատակով:

16.13. Լրացուցիչ պայմանների համաձայն ապահովագրական հատուցումն ուղղակիորեն իրականացվում է վնաս կրած անձանց՝ համաձայն վերջիններիս կողմից ներկայացված դիմումի, պահանջների և հատուցման ստացման եղանակի: Ապահովագրողն իրավունք ունի հատուցում վճարել Ապահովադրին՝ օրինական ուժի մեջ մտած դատական վճռի համար կատարված ծախսերի համար՝

Պայմանագրով սահմանված չափով:

16.14. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՄԵՐԺԵԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ, եթե.

16.14.1. Ապահովադրի կամ վնաս կրած երրորդ անձանց դիտավորյալ գործողությունները միտված են եղել ապահովագրական պատահարի տեղի ունենալուն, բացառությամբ երրորդ անձանց կյանքին և առողջությանը պատճառված վնասների: Վերջինիս դեպքում Ապահովագրողը կարող է կիրառել հատուցման հետպահանջի իրավունք՝ մեղավոր անձի նկատմամբ, հատուցված վնասի չափով:

16.14.2. Ապահովագրողին ապահովագրական պատահարի մասին տեղեկացնելու ժամկետները խախտվել են կամ վնասի փաստը և չափը հավաստող փաստաթղթերը չեն ներկայացվել, որն ազդել է Ապահովագրողի՝ ապահովագրական հատուցում վճարելու պարտավորության վրա,

16.14.3. Տեղի է ունեցել դիտավորյալ անգործություն, որի արդյունքում չեն ձեռնարկվել վնասի նվազեցման համար ողջամիտ և հասանելի միջոցներ:

16.15. Սույն Լրացուցիչ Պայմաններով չկարգավորվող բոլոր այլ դեպքերի համար կիրառվում են Պայմանները: Լրացուցիչ պայմանների և Պայմանների միջև անհամապատասխանության դեպքում առաջնահերթությունը տրվում է Լրացուցիչ պայմաններին: